# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18

վիճակագրության պետական խորհրդի նիստի

--------------------------------------------------------------------------------

27.12.2011թ. ժ.11: 00

**Մասնակցում էին՝**

Ս.Մնացականյան (Խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (Խորհրդի անդամներ)

Հ. Գրիգորյան *(Խորհրդի քարտուղար)*

**Հրավիրված էին՝** Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար),Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Ա. Ավետիսյան (պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ), Տ. Բաբախանյան (պարենային ապահովության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ). Ռ.Պետրոսյան (տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ):

Օրակարգի նախագծում ՝ չորս հարց.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները Երևանի պետական համալսարանի հայցորդ Արմենուհի Առուշանյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Իտալիայի Հռոմ քաղաքում 2011 թվականի դեկտեմբերի 5-ից 9-ը Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից կազմակերպված «Մատակարարում-սպառում հաշիվների և պարենային հաշվեկշիռների կազման մեթոդաբանության կատարելագործում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Գ.Անանյան, Ա.Ավետիսյան, Տ.Բաբախանյան/*

3.2. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2011 թվականի դեկտեմբերի 2-ից 16-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված "EUROTRACE" խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Ռ. Պետրոսյան/*

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
/Քվեարկության արդյունքները-կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «565726.1» թիվը փոխարինել «570672.0» թվով, 4-րդ տողի «79793.1» թիվը փոխարինել «82667.1» թվով, ընդամենը տողի «743658.3» թիվը փոխարինել «751478.2» թվով:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Լսեցին՝
2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները Երևանի պետական համալսարանի հայցորդ Արմենուհի Առուշանյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*
Որոշեցին՝
թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Երևանի պետական համալսարանի հայցորդ Արմենուհի Առուշանյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*
Լսեցին՝
3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.
3.1. Հաղորդում՝ Իտալիայի Հռոմ քաղաքում 2011 թվականի դեկտեմբերի 5-ից 9-ը Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից կազմակերպված «Մատակարարում-սպառում հաշիվների և պարենային հաշվեկշիռների կազման մեթոդաբանության կատարելագործում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Գ.Անանյան, Ա.Ավետիսյան, Տ.Բաբախանյան/*
3.2. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2011 թվականի դեկտեմբերի 2-ից 16-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված “EUROTRACE” խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Ռ.Պետրոսյան/*
Որոշեցին՝
արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունել ի գիտություն
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ